ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«28» փետրվարի 2019 թվականի N: 33-ա ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 17-Ի N 95-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2016 թվականի փետրվարի 11-ի N 25-Ն հրամանի N 1 հավելվածի 3.3-րդ, 3.10-րդ, 3.11-րդ, 3.12-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով ՀՀ Շիրակի մարզպետարանի սոցիալական աջակցության Ախուրյանի տարածքային գործակալության պետի 2019 թվականի փետրվարի 13-ի N 41 գրությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի տարածքային մակարդակում կնքված սոցիալական համագործակցության համաձայնագրի համաձայն ձևավորված համակարգող խորհրդի անհատական կազմում Մելանյա Գրիգորյանի փոխարեն ընդգրկել Կարինե Սանդրոսյանին:

2. Այդ կապակցությամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2018 թվականի ապրիլի 17-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի տարածքային մակարդակում կնքված սոցիալական համագործակցության համաձայնագրի համաձայն ձևավորված համակարգող խորհրդի անհատական կազմը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2016 թվականի

հունիսի 30-ի N 261-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 95-Ա որոշման հավելվածում «Մելանյա Գրիգորյան» բառերը փոխարինել «Կարինե Սանդրոսյան» բառերով:

Տ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է